# ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑՈՒՄ ՆՇՎԱԾ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

| Զեկույցում նշված թերությունները | Բարելավման գործողությունների նկարագիրը | Բարելավման քայլերը | Ընթացիկ վիճակը | Պատասխանատուները /պատասխանատու ստորաբաժանումները/ | Պահանջվող ռեսուրսներ՝ մարդկային և ֆինանսական | Ժամանակահատվածը | Վերջնարդյունքները | Վերջնարդյունքների գնահատման ցուցիչները |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| **1. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ** | | | | | | | | |
| 1.1. ԳՊՀ սահմանված գերակա ուղղությունները համընդգրկուն են և հաճախ խաչվում են: | 1. ԳՊՀ 2022-2027 ռազմավարական ծրագրում /այսուհետ՝ ՌԾ/ գերակա ուղղությունները սահմանելիս հաշվի առնել զեկույցում նշված թերությունը: | 1.ԳՊՀ 2022-2027 ռազմավարական ծրագրում գերակա ուղղություններն առավել հստակեցնել, կոնկրետացնել,<br>2. ԳՊՀ 2022-2027 ռազմավարական ծրագրի իրականացման գործողությունների պլանում յուրաքանչյուր ուղղության համար խնդիրները սահմանել՝ ըստ տվյալ ուղղության առաջնահերթության: | ԳՊՀ 2022-2027 ռազմավարական ծրագիրը մշակման փուլում է: | ԳՊՀ ռեկտոր, գիտական խորհուրդ, ԳՊՀ վարչական անձնակազմ | Լրացուցիչ ֆինանսական ռեսուրսներ չեն պահանջվում | 2021-2022 ուստարի | ԳՊՀ նոր ռազմավարական ծրագիր 2022-2027թթ. ժամանակահատվածի համար, որը սահմանում է բուհի զարգացման առավել հստակ և միմյանց չկրկնող գերակա ուղղություններ: | Ամրագրված քանակական և որակական արդյունավետության գնահատման ցուցիչներ՝ ըստ նոր ՌԾ-ի նախատեսած գերակա ուղղությունների: |
| 1. 2. ԳՊՀ ձևակերպված տեսլականը հատվածային է և հիմնականում անորոշ, ԳՊՀ զարգացման տեսլականը, հստակ չէ, ինչը խոչընդոտում է ինչպես միասնական ընկալման ձևավորմանն ու ջանքերի կոնսոլիդացիային, այնպես էլ տեսլականից իրագործելի և չափելի նպատակներ բխեցնելուն: | Նոր ՌԾ-ում ձևակերպել ԳՊՀ զարգացման այնպիսի տեսլական, որը ընդհանուր և ընկալելի կլինի շահակիցների հիմնական խմբերի համար: | 1. Արտաքին և ներքին շահակիցների շրջանում իրականացնել ուսումնասիրություններ բուհի զարգացման տեսլականի վերաբերյալ, բացահայտել նրանց պատկերացումներն ու ակնկալիքներն այս ուղղությամբ<br>2. Մշակել բուհի առաքելության նոր ձևակերպում՝ միաժամանակ այն | Իրականացվում են ներքին և արտաքին շահակիցների դիրքորոշումների և ակնկալիքների ուսումնասիրություններ: | ԳՊՀ ռեկտոր, գիտական խորհուրդ, ԳՊՀ վարչական անձնակազմ, Որակի ապահովման բաժին | Ուսումնասիրությունների համար անհրաժեշտ միջոցներ՝ 100.000 ՀՀ դրամի չափով: | 2021-2022 ուստարի | ԳՊՀ նոր տեսլական, որն արտացոլում է շահակիցների ակնկալիքներն ու պատկերացումները բուհի հետագա զարգացման վերաբերյալ: | ԳՊՀ տեսլականի իրականացման համար չափելի և հասանելի գործողությունների պլաններ, դրանց իրականացման համար մշակված մշտադիտարկման կառուցակարգեր, ամենամյա հրապարակված վերլուծություններ, իրականացված բարելավումներ |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | համապատասխանեցնելով շահակիցների շրջանում ձևավորված պատկերացումներին,<br>3. ՌԾ գերակա ուղղությունները բխեցնել ԳՊՀ տեսլականից և ՌԾ իրականացման ժամանակահատվածում միջոցներ ձեռնարկել բուհի զարգացման այն ուղղություններով, որոնք առավել կարևոր են: | | | | | | |
| 1. 3. Շահակիցների շրջանում չկա միասնական պատկերացում բուհի զարգացման տեսլականի վերաբերյալ: Սա վկայում է տեսլականի և նպատակների ձևավորման միասնական գործուն հարթակի պակասի մասին: | 1.Տեսլականի երկարաժամ կետ իրագործման տրամաբանությունից ելնելով՝ հիմնավորել և սահմանել մոտակա տարիների զարգացման գերակա ուղղությունները՝ դրանց համապատասխան իրականացնելով հատկացվող միջոցների վերաբաշխում:<br>2.Ապահովել նպատակների, խնդիրների և գործողությունների այնպիսի աստիճանակարգություն, որ յուրաքանչյուր ստորաբաժան | 1. Բուհի մոտակա տարիների գերակա ուղղությունները սահմանելիս՝ հաշվի առնել բոլոր շահակիցների պատկերացումներն ու առաջարկները:<br><br>2. Ստեղծել աշխատանքային խումբ՝ տարբեր թիրախային խմբերի շրջանում ուսումնասիրելու կարծիքներն ու առաջարկությունները՝ բուհի գերակա ուղղությունները հստակեցնելու նպատակով:<br>3. Բուհի պաշտոնական կայքէջի «Նախագծեր» բաժնում՝ որպես միասնական հարթակ, հավաքագրել բուհի տեսլականի վերաբերյալ | Ուսումնասիրվում են նախորդ ժամանակահատվածում սահմանված գերակա ուղղություններով իրականացված աշխատանքները, նախապես սահմանված վերջնարդյունքների հասանելիության աստիճանը, վերլուծվում են մշտադիտարկման պլանները: | ԳՊՀ հոգաբարձուների խորհուրդ, ԳՊՀ ռեկտոր, ԳՊՀ գիտական խորհուրդ | Ուսումնասիրությունների, վերլուծությունների, հարցախույզերի և հրապարակումների համար անհրաժեշտ միջոցներ՝ 150.000 ՀՀ դրամի չափով: | 2022-2027 ուստարի | Բոլոր շահակիցների համար սահմանված, հասանելի և ընդունելի՝ բուհի զարգացման գերակա ուղղություններ | Գերակա ուղղություններով կատարված աշխատանքների արդյունավետության գնահատման հաշվետվություններ, հրապարակված վերլուծություններ, շահակիցների բավարարվածության աստիճանի աճ: |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | ման և աշխատակցի համար տեսանելի լինի իր գործողությունների կապն առաքելության և տեսլականի իրականացման հետ: | շահակիցների առաջարկություններն ու դիտարկումները:<br><br>4. Կազմակերպել կլոր-սեղան քննարկումներ արտաքին և ներքին շահակիցների հետ, բուհի կառուցվածքային ստորաբաժանումների, ուսանողական ինքնակառավարման մարմինների, Հոգաբարձուների խորհրդի անդամների, գործատուների, մարզի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, այլ շահակիցների հետ:<br><br>5. Համադրել ֆինանսական պլանավորման արդյունքները՝ ըստ անհրաժեշտության կատարել վերաբաշխումներ:<br>6. Յուրաքանչյուր ստորաբաժանման համար մշակել զարգացման գերակա ուղղություններ, որոնք բխեցված են բուհի գերակա ուղղություններից և միտված են դրանց իրականացմանը: | | | | | | |
| 1. 4. Տարեկան ֆինանսական նախահաշվով նախատեսվում է միջոցների հատկացում գրեթե | Գործարկել ՌԾ-ի՝ ըստ անհրաժեշտության | 1. ՌԾ կատարողականի մշտադիտարկման | Նախորդ ժամանակահատ | ԳՊՀ հոգաբարձուների խորհուրդ, ԳՊՀ | Լրացուցիչ ֆինանսական | 2022-2027թթ. | Բուհի նոր ՌԾ-ին համապատասխանեցված | ՌԾ-ի գերակա ուղղություններով իրականացված |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| բոլոր ուղղություններով՝ ուղղված բոլոր ստորաբաժանումներին: Կատարողականներում, սակայն, որոշ ուղղություններով առկա են զգալի շեղումներ: | վերանայման մեխանիզմներ՝ համարժեք արձագանքելով պլանների կատարման բոլոր շեղումներին: | պլաններում ամրագրել յուրաքանչյուր ցուցիչի շեղումը, վերլուծել դրանց պատճառներն ու մշակել բարելավման ուղիներ։<br><br>2. Միջնաժամկետ հաշվետվության և վերլուծությունների արդյունքները համակողմանիորեն քննարկել բոլոր կառուցվածքային ստորաբաժանումներում, գիտական խորհրդում և, ըստ անհրաժեշտության, Հոգաբարձուների խորհրդին ներկայացնել ՌԾ-ի փոփոխման առաջարկներ։ | վածի ՌԾ-ի մշտադիտարկման վերլուծությունների առկայություն։ | ռեկտոր, ԳՊՀ գիտական խորհուրդ | միջոցներ հարկավոր չեն | | ֆինանսական հնգամյա պլանավորում | աշխատանքների համար նախատեսված ֆինանսական հատկացումների և կատարողականների շեղման նվազեցում, այդ ուղղությամբ վերլուծությունների հրապարակում, շահակիցների բավարարվածության աճի ապահովում: |
| 1. 5. Հոգաբարձուների խորհրդում ներկայացված և չներկայացված շահակիցների ազդեցությունը նպատակների ձևավորման վրա ունի ինստիտուցիոնալացման կարիք: | Նպատակների, խնդիրների և գործողությունների պլանների մշակման գործընթացում ապահովել բոլոր շահակիցների ներգրավվածությունը: | 1. Պարբերաբար ու համակարգված ուսումնասիրել շահակիցների, այդ թվում՝ Հոգաբարձուների խորհրդի անդամների կրթական, գիտական, սոցիալական և այլ ոլորտների հետ կապված ակնկալիքներն ու սպասումները։<br><br>2. Նախագծել և գործարկել ներքին և արտաքին շահակիցների կարիքների ուսումնասիրման հարթակներ, | Որակի ապահովման ձևավորված մշակույթ, նպատակների իրականացմանը միտված կառուցակարգեր։ | ԳՊՀ ռեկտորատ, կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներ | Լրացուցիչ ֆանանսական միջոցներ հարկավոր չեն։ | 2022-2027թթ. | Բոլոր շահակիցների մասնակցային պայմաններում մշակված և հաստատված բուհի հնգամյա զարգացման ՌԾ: | Բուհի ռազմավարական պլանավորմանը մասնակցության հետ կապված՝ շահակիցների բավարարվածության աստիճանի աճ: |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 3. Խրախուսել շահակիցների հասարակական ակտիվությունը, ներդնել մոտիցվացնող կառուցակարգեր | | | | | | |
| 1. 6. Ռազմավարական ծրագրի բաժանումը միջնաժամկետ և տարեկան պլանների հիմնականում մեխանիկական է: | ՌԾ նպատակների իրականացման գործողությունների պլաններում ապահովել գործընթացների աստիճանական, տրամաբանված ու համընթաց բաշխում հնգամյա կտրվածքով: | Բուհի ՌԾ-ի և բոլոր կառուցվածքային ստորաբաժանումնե րի գործողությունների ծրագրերում համապատասխան ժամանակահատվածի բաշխվածություն, փուլերի փոխհամաձայնեցում: | Գործող պլանների առկայություն՝ ըստ ժամանակահատ վածների, նոր ՌԾ գործողություննե րի պլանը մշակման փուլում է: | ԳՊՀ ռեկտորատ, կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներ | Խորհրդատվութ յունների և վերապատրաս տումների համար անհրա ժեշտ ֆինանսական միջոցներ 200.000 դրամ | 2022-2023 թթ | ՌԾ գործողություննե րի մշակված երկարաժամկետ, միջնաժամկետ և կարճաժամկետ պլաններ, դրանց համապատաս խան կառուցվածքային ստորաբաժանում ների գործողություննե րի պլաններ՝ ըստ կատարման ժամանակահատ վածի, պատասխանա տուների, առկա և պահանջվող մարդկային և ֆինանսական ռեսուրսների, մարտահրավերնե րի, ռիսկերի, արդյունավետու թյան գնահատման ցուցիչների: | ՌԾ գործողությունների և կառուցվածքային ստորաբաժանումնե րի երկարաժամկետ, միջնաժամկետ և կարճաժամկետ պլանների մշտադիտարկման պլաններ, արդյունավետության ցուցիչների շեղումների պատճառների հրապարակված, շահակիցներին հասանելի վերլուծություններ; |
| **2.ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ** | | | | | | | | |
| 2. 1. Կոլեգիալ կառավարման մարմինների նիստերի արձանագրությունները և այցի ընթացքում վերհանված տեղեկությունները թույլ չեն տալիս փաստել, որ այդ մարմինների միջոցով ապահովվում է կառավարման լիարժեք կոլեգիալությունը: | Հոգաբարձուների խորհրդի և կոլեգիալ կառավարման մյուս մարմինների նիստերի արձանագրություննե րում հստակ արտացոլել | 1.Կոլեգիալ կառավարման մարմինների նիստերի արձանագրություննե րը շարադրել՝ մանրամասն՝ արտացոլելով որոշումների | 1. ԳՊՀ բազմանձնյա՝ կոլեգիալ կառավարման մարմինների նիստերն անձանագրվում են, սակայն ընթացքի և | Հոգաբարձուների խորհուրդ, ռեկտորատ, գիտական խորհուրդ, դեկանատ, ամբիոն | Լրացուցիչ ֆինանսական ռեսուրսներ չեն պահանջվում | 2022-2027թթ. | Կոլեգիալ կառավարման մարմիններում ընդգրկված մասնակիցների կողմից նախաձեռնողա կանության աճ, կառավարման | Հոգաբարձուների խորհրդի և կոլեգիալ կառավարման մյուս մարմինների նիստերի արձանագրություննե րի վերլուծություններ |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | քննարկումների ընթացքը: | ընդունման ընթացքը և դրանց կատարման վերահսկման գործընթացը, շահակիցների ազդեցությունը կոլեգիալ կառավարման մարմինների կազմում:<br>2. Որոշումների նախագծերի քննարկման գործընթացում ակտիվացնել շահակիցների դերը, որոշումների կայացման և կատարման վրա նրանց ազդեցությունը: | կոլեգիալ կառավարման գործընթացի մանրամասն արձանագրման կարիք կա: | | | | լիարժեք կոլեգիալության ապահովում, մասնակցային կառավարման կառուցակարգերի բարելավում: | |
| 2. 2. Առանձնակի մտահոգիչ է հոգաբարձուների խորհրդի կողմից նախաձեռնողականության պակասը՝ հատկապես հաշվի առնելով հոգաբարձուների խորհրդի բարձր ներուժը, որը ձևավորվել է շահակիցների տարբեր խմբերի ներկայացուցիչների ներգրավման շնորհիվ: | Բարձրացնել հոգաբարձուների խորհրդի ներուժի օգտագործման արդյունավետությունը՝ ուժեղացնելով խորհրդի անդամների ներգրավվածությունը ԳՊՀ զարգացման գործընթացներում: | 1. ԳՊՀ ՌԾ իրականացման գործողությունների պլաններում, ընթացիկ գործընթացներում պլանավորել հոգաբարձուների խորհրդի անդամներին հասցեագրվող գործողություններ:<br>2. ԳՊՀ կառավարման գործընթացից շահակիցների բավարարվածությունը պարբերաբար ուսումնասիրել, արդյունքները ներկայացնել խորհրդի անդամներին: | 1.Խորհրդի անդամները դրսևորում են շահագրգռվածություն և նախաձեռնողականություն, սակայն նրանց ներուժի լիարժեք օգտագործման կարիք կա: | Հոգաբարձուների խորհուրդ, ռեկտորատ, գիտական խորհուրդ: | Լրացուցիչ ֆինանսական ռեսուրսներ չեն պահանջվում | 2022-2027թթ. | Հոգաբարձուների խորհրդի նախաձեռնողականության աճ: | ԳՊՀ կառավարման գործընթացներում հոգաբարձուների խորհրդի ներգրավվածության ավելացում: |
| 2. 3. Կառավարման համակարգի՝ ռեսուրսներով ապահովվածության կրիտիկական խնդիրներ չեն | Ներդնել կառավարման համակարգի, դրա | 1. Իրականացնել կառավարման համակարգի | 1. Իրականացվում են, սակայն | Հոգաբարձուների խորհուրդ, ռեկտորատ, գիտական խորհուրդ, | Պահանջվում են լրացուցիչ ֆինանսական | 2022-2027թթ. | Կառավարման համակարգի, դրա առանձին | Ներդրված կառուցակարգերի շնորհիվ վերհանված |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| վերհանվել, կատարողականներում առկա են լինում զգալի շեղումներ, որոնք չեն առաջացնում փոփոխություններ: | առանձին օղակների և հատկացվող ռեսուրսների արդյունավետության գնահատման մեխանիզմներ և հետևողականորեն արձագանքել գնահատման արդյունքներին: | ֆինանսական և մարդկային ռեսուրսների արդյունավետության գնահատումներ:<br><br>2. Իրականացված գնահատումների արդյունքները վերլուծել, հասանելի դարձնել կառավարման գործընթացի բոլոր մասնակիցներին ու շահակիցներին:<br><br>3. Ձեռնարկել միջոցառումներ՝ բարելավելու կառավարման համակարգի ռեսուրսներով ապահովվածությունը: | բարելավման կարիք կա: | Որակի ապահովման բաժին | ռեսուրսներ՝ 2.000.000 ՀՀ դրամի չափով | | օղակների և հատկացվող ռեսուրսների գնահատման մեխանիզմների ներդնում, խնդիրների վերհանում և բարելավում: | և լուծված խնդիրների քանակ, շահակիցների բավարարվածության աճ: |
| 2. 4. Գնահատելով ռազմավարական ծրագրից միջնաժամկետ և կարճաժամկետ ծրագրերի, գործողությունների համահամալսարանական և ստորաբաժանումների պլանների բխեցման մոտեցումը՝ ծրագրերի մեխանիկական բաժանումը, կարող է վտանգել ռազմավարության առանցքային գաղափարների փոխանցումը կատարողներին: | ԳՊՀ կառուցվածքային ստորաբաժանումնե րի կարճաժամկետ և միջնաժամկետ գործողությունների ծրագրերը կազմելիս հաշվի առնել ինչպես ԳՊՀ ռազմավարական միջնաժամկետ, կարճաժամկետ գործողությունների ծրագրերը, այնպես էլ արտաքին գործոնների ազդեցությունը և փոփոխություններ կատարել՝ իրավիճակին համապատասխան: | 1. Բուհի ՌԾ-ն մշակել բոլոր կառուցվածքային ստորաբաժանումնե րի ակտիվ մասնակցությամբ, նրանց առաջարկությունների հաշվառմամբ:<br><br>2. Համալսարանի ՌԾ-ի իրականացման գործողությունների միջնաժամկետ և կարճաժամկետ պլանները մշակելիս ձևավորել աշխատանքային խմբեր՝ ներգրավելով բոլոր կառուցվածքային ստորաբաժանումնե | 2022-2027թթ. ՌԾ-ն մշակման փուլում է | ԳՊՀ կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներ | Լրացուցիչ ֆինանսական ռեսուրսներ չեն պահանջվում | 2022-2027թթ. | Ստորաբաժանում ների միջնաժամկետ և կարճաժամկետ գործողություննե րի ծրագրեր՝ բխեցված բուհի ռազմավարական ծրագրից և համապատասխա նեցված ստորաբաժան ման առանձնահատկու թյուններին: | Գործողությունների պլանների մշտադիտարկման վերլուծություններ: |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | րի ներկայացուցիչներին։<br><br>3. Ստորաբաժանումների միջնաժամկետ և կարճաժամկետ գործողությունների ծրագրերը կազմել բուհի ռազմավարական ծրագրից ելնելով՝ ըստ անհրաժեշտության կատարելով փոփոխություններ և համապատասխանեցնելով ստորաբաժանման առանձնահատկություններին։ | | | | | | |
| 2. 5.Փորձագիտական խումբը խնդրահարույց է համարում սահմանված ցուցիչների երբեմն ոչ չափելի բնույթը, որը կարող է մշտադիտարկումը դարձնել ձևական, ինչի արդյունքում չեն կատարվի անհրաժեշտ եզրակացություններ: | Վերջնարդյունքների գնահատման ցուցիչ-ների չափելիության աստիճանի բարձրացում: | 1.Ուշադրություն դարձնել գործողությունների պլաններում վերջնարդյունքների գնահատման ցուցիչների պարտադիր առկայությանը:<br><br>2.Մշակել ընդհանուր մոտեցում ու մեխանիզմ՝ գործողությունների պլաններում արտացոլված որակական և քանակական ցուցիչների ճշգրտությունն ապահովելու նպատակով:<br>3.Մշտադիտարկել գնահատման ցուցիչների չափելիության աստիճանը: | Գտնվում է քննարկման փուլում | ԳՊՀ ստորաբաժանումներ | Լրացուցիչ ռեսուրսի կարիք չկա | 2022-2024թթ. | 1.Ստորաբաժանումների գործողությունների պլաններում վերջնարդյունքների գնահատման ցուցիչների առկայություն:<br>2.Գնահատման ցուցիչների կիրառման նկատմամբ ընդհանուր մոտեցման և արդյունավետ մեխանիզմների մշակում: | 1.Որակական և քանակական չափելի ցուցիչների նկարագրերի առկայություն, ցուցիչների իրականացման գործընթացի տարեկան մշտադիտարկումներ: |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2. 6.Արտաքին միջավայրի համակարգված և կանոնավոր ուսումնասիրություններ և տարբեր գործոնների ազդեցության գնահատումներ չիրականացնելը փորձագիտական խումբը համարում է ռիսկային: Ռիսկային է նաև տեղեկությունների աղբյուրների դիվերսիֆիկացմանը զուգահեռ գործիքների դիվերսիֆիկացման պակասը: | Արտաքին միջավայ-րի, աշխատաշուկայի և այլ գործոնների գնահատումների համակարգված իրականացում և գնահատում: | 1.Արտաքին միջավայրից ստացված տվյալների հավաքագրում, օպերատիվ մշակում և գնահատում: | Աշխատանքներ են կատարվում նշված ուղղություններով: | Դեկանատներ, ամբիոններ, Որակի ապահովման բաժին /ՈԱԲ/, Շրջանավարտների և կարիերայի կենտրոն, ամբիոններ | ԳՊՀ ներքին ռեսուրսներ և արտաքին աղբյուրներ | 2022-2027թթ. | 1.Հավաքագրված տեղեկությունների բազայի առկայություն: | 1.Հաշվետվություններ, վերլուծություններ |
| 2. 7.Դեռևս չեն ներդրվել մտից տեղեկությունների հետ կապված գործընթացների գնահատման մեխանիզմներ: Այդպիսով վտանգվում է տեղեկությունների հավաքագրման թիրախայնությունն ու կիրառելիությունը: Արդյունքում ԳՊՀ-ն մեծ ռեսուրս է ծախսում տեղեկությունների հավաքագրման վրա, սակայն այն համաչափորեն չի վերլուծվում և օգտագործվում: | Տեղեկությունների հավաքագրման, գնահատման և վեր-լուծության ուղղությամբ տարվող աշխատանքների ար-դյունավետության բարձրացում: | 1.Մշակել և ներդնել ստացված տեղեկությունների գնահատման մեխանիզմներ:<br><br>2.Իրականացնել ստացված տեղեկությունների վերլուծություն և նպատակային կիրառություն: | Մշակվում են մեխանիզմները | Դեկանատներ, ՈԱԲ, Ակադեմիական Ակադեմիական քաղաքականության բաժին /ԱՔԲ/, Շրջանավարտների և կարիերայի կենտրոն, Արտաքին կապերի և լրատվության բաժին | ԳՊՀ ներքին ռեսուրսներ | 2022-2023թթ. | 1.Ստացված տեղեկությունների գնահատման մեխանիզմների առկայություն: | 1.Հաշվետվություններ, վերլուծություններ: |
| 2. 8.Ելից տեղեկությունների կապուղիների արդյունավետությունը գնահատվում է, սակայն փորձագիտական խումբը կարծում է, որ կապուղու արդյունավետությունը փոխկապված է բուն տեղեկության բովանդակության հետ, և առանց բովանդակության արդյունավետության գնահատման՝ կապուղու արդյունավետության գնահատումը կարող է հավաստի չլինել: | Տեղեկությունների տրամադրման կապ-ուղիների և տեղե-կության բովանդա-կության փոխկապ-վածության ապահովում: | Իրականացնել ելից տեղեկությունների բովանդակության և կապուղիների արդյունավետության փոխկապակցված գնահատում: | Աշխատանքներն ընթացքի մեջ են | Արտաքին կապերի և լրատվության բաժին,ՈԱԲ, Տեղեկատվական տեխնոլոգիաների /SS/ բաժին | ԳՊՀ ներքին ռեսուրսներ | 2022-2023թթ. | Ելից տեղեկությունների բովանդակային գնահատումներ | Գնահատումներ, վերլուծություններ: |
| **3. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ** | | | | | | | | |
| 3. 1. Մագիստրատուրայի և բակալավրիատի մասնագրերում հստակ տարբերակում չկա, այդ մակարդակների վերջնարդյունքների և դրանով պայմանավորված՝ այլ բաղադրիչների առումով, այլապես, դա կարող է հանգեցնել կրթության շարունակականության ոչ պատշաճ ընկալմանը, արտաքին շահակիցների կողմից բակալավրի և մագիստրոսի | Բովանդակային առումով վերլուծության ենթարկել բակալավրիատի և մագիստրատուրայի մասնագրերը, համադրել կրթական վերջնարդյունքները և հստակ տարբերակել: | 1. Համադրել մասնագիտական կրթական ծրագրերի համապատասխանությունը ՀՀ ՈԱՇ-ի բնութագրիչների հետ<br>2. Կրթական ծրագրերում վերանայել մասնագիտական | Բակալավրիատի և մագիստրատուրայի կրթական ծրագրերում սահմանված են վերջնարդյունքներ, որոնք համադրված են գործընկեր | ԱՔԲ, Ֆակուլտետների դեկանատներ, ամբիոններ | Լրացուցիչ ֆինանսական ռեսուրսներ 2.000.000 ՀՀ դրամի չափով համադրական վերլուծության (բենչմարքինգ) իրականացման համար | 2022-2024թթ. | 1. Բակալավրիատի և մագիստրատուրայի կրթական ծրագրերի լիովին համապատասխանեցում ՀՀ ՈԱՇ-ի բնութագրիչների, ինչպես նաև ՀՀ- | ԳՊՀ բակալավրիատի թվով 16 և մագիստրատուրայի 13 վերանայված՝ և հստակ տարբերակված վերջնարդյունքներով կրթական ծրագրեր: |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| կոմպետենցիաների սխալ ընկալմանը: | | առարկաների վերջնարդյունքները և հստակ տարբերակում մտցնել բակալավրիատի և մագիստրատուրայի կրթական ծրագրերում: 3. Կատարել համադրական վերլուծություն (բենչմարքինգ) հայաստանյան և արտասահմանյան գործընկեր բուհերի կրթական ծրագրերի հետ՝ հաշվի առնելով առաջատար փորձն ու ոլորտային փոփոխությունները: 4. Վերլուծության ենթարկել ՀՀ-ում ընդունված որակավորումների ոլորտային շրջանակներում (ՈՈՇ) իրականացված մշակումները: | բուհերի համապատասխան կրթական ծրագրերի, ՈԱՇ-ի և ՈՈՇ (առկայության դեպքում) հետ: | | | | ում ընդունված ոլորտային որակավորումներ ի շրջանակի (ՈՈՇ) բնութագրերի հետ: | |
| 3. 2. Անհրաժեշտ է ամրապնդել ՄԿԾ-ների առանձին կառուցամասերի (Ա, Բ, Գ) վերջնարդյունքների՝ միմյանց միջև, ինչպես նաև՝ դրանց ու ՀՀ ՈԱՇ-ի բնութագրիչների միջև տրամաբանական կապը: Կարևոր է, որ ՄԿԾ-ների վերջնարդյունքները լինեն հստակ, չափելի և իրատեսական՝ դասավանդման և ուսումնառության ու գնահատման մեթոդների շղթայի ու առկա ռեսուրսների պայմաններում: | Վերանայել մասնագիտական կրթական ծրագրերի առանձին կառուցամասերի (Ա. Բ. Գ) վերջնարդյունքները, ամրապնդել կապը ինչպես միմյանց, այնպես էլ ՀՀ ՈԱՇ-ի բնութագրիչների միջև: Վերջնարդյունքների երեք խմբերի միջև ապահովել տրամաբանական կապ, դրանք | Կրթական ծրագրերում վերանայել և թարմացնել առանձին կառուցամասերի (Ա. Բ. Գ) վերջնարդյունքները, ապահովել դրանց միջև տրամաբանական կապը: | ԳՊՀ-ում գործող կրթական ծրագրերի մասնագրեր՝ նկարագրված տրամաբանորեն միմյանց կապված կառուցամասե րով: | Ամբիոնների պրոֆեսորադասախո սական կազմ, ֆակուլտետների ուսումնամեթոդական խորհուրդներ | Կրթական ծրագրերի ղեկավարներին տրամադրվող լրացուցիչ ֆինանսական միջոցներ՝ 3.335.000 ՀՀ դրամի չափով | 2022-2027թթ. | Բակալավրիատի և մագիստրատուրայի կրթական ծրագրերում վերանայված և թարմացված, տրամաբանական կապերով միմյանց հաջորդող կրթական վերջնարդյունքներով կառուցամասեր: | ԳՊՀ բակալավրիատի թվով 16 և մագիստրատուրայի 13 վերանայված կրթական ծրագրեր՝ համապատասխան կառուցամասերով և բարելավված կրթական վերջնարդյունքներով: |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | հնարավորինս հստակ ձևակերպել և չափելի դարձնել: | | | | | | | |
| 3. 3. ՄԿԾ-ները աչքի են ընկնում ուսումնառության վերջնարդյունքների նախընտրելի չափից շատ լինելով, ինչն ուռճացնում է և վտանգի տակ կարող է դնել դրանց չափելիությունը, առկա ժամաքանակի, ծավալների, դասախոսների ծանրաբեռնվածության, կիրառվող մեթոդների բազմազանության պայմաններում, և ստուգման տեսանկյունից դրանց փաստացի իրագործման հնարավորությունը: | Բովանդակային առումով ամբիոններում քննարկել մասնագիտական կրթական ծրագրերում /ՄԿԾ/ ներառված դասընթացների վերջնարդյունքների նախընտրելի չափերը, այն դարձնել ավելի սեղմ, իրականանալի: | 1. Ամբիոններում վերանայել կրթական ծրագրերում ներառված դասընթացների առարկայական ծրագրերը,<br>2. առարկայական ծրագրերում սահմանել վերջնարդյունքների ընդունելի առավելագույն քանակ<br>3. Կրթական ծրագրերի վերջնարդյունքները դարձնել հավաք, սեղմ և բովանդակային առումով ընդունելի ու իրագործելի: | ՄԿԾ-ներում առկա են կրթական վերջնարդյունքներ, որոնք համապատասխանում են գործող կրթական ծրագրերի բովադակությանը: | Ամբիոնների պրոֆեսորադասախոսական /ՊԴ/ կազմ, ֆակուլտետների ուսումնամեթոդական խորհուրդներ | ՊԴ կազմի ակադեմիական ծանրաբեռնվածության մեջ առարկայական ծրագրերի վերանայման համար տրամադրվող ֆինանսական միջոցներ՝ 7,751, 000 ՀՀ դրամ: | 2022-2027թթ. | Բակալավրիատի և մագիստրատուրայի ծրագրերի վերջնարդյունքների քանակի վերանայում, բովանդակային առումով հստակեցում: | ՄԿԾ-ների իրատեսական և չափելի վերջնարդյունքներ: |
| 3. 4. ԳՊՀ-ում ուսումնառության և դասավանդման մեթոդների փաստացի և լիարժեք ապահովումը խնդրահարույց է նախ՝ ոչ հստակ վերջնարդյունքներով պայմանավորված՝ նաև մեթոդների ընդհանրական ու բոլոր Ա, Բ, Գ կոմպետենցիաների համար նույնական լինելով: | Բազմազանեցնել դասընթացների ընթացքում կիրառվող դասավանդման և ուսումնառության մեթոդները՝ Ա. Բ. Գ կոմպետենցիաների համար դարձնելով հստակ տարբերակված: Դասավանդման, ուսումնառության նախընտրելի մեթոդները սահմանելիս՝ հաշվի առնել վերջնարդյունքների առանձին տեսակների առանձնահատկությունները: | 1. Պարբերաբար իրականացնել դասավանդման մեթոդների բազմազանեցմանը միտված վերապատրաստումներ դասախոսական կազմի համար<br>2. Կրթական ծրագրերի դասընթացներում հստակեցնել դասավանդման և ուսումնառության մեթոդները՝ հաշվի առնելով դասավանդվող առարկաների բնույթը և նախատեսված վերջնարդյունքները: | Կրթական ծրագրերում նկարագրված են դասավանդման և ուսումնառության հստակ մեթոդներ: | Ամբիոնների պրոֆեսորադասախոսական կազմ, ֆակուլտետների ուսումնամեթոդական խորհուրդներ | Վերապատրաստումների համար անհրաժեշտ ֆինանսական միջոցներ, 1.380.000 ՀՀ դրամի չափով, տարեկան առնվազն 5 վերապատրաստումների համար | 2022-2027թթ. | Բակալավրիատի և մագիստրատուրայի ծրագրերում դասավանդման և ուսումնառության տարբերակված մեթոդների հստակ սահմանում: | ԳՊՀ բակալավրիատի թվով 16 և մագիստրատուրայի 13 կրթական ծրագրերի կառուցամասերի համար դասավանդման և ուսումնառության մեթոդների հստակ սահմանում և կիրառում, դրանց արդյունավետությունից ուսանողների բավարարվածության աստիճանի աճի ապահովում: |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 3. ՄԿԾ-ների Ա. Բ. Գ. կոմպետենցիաների համար կիրառել դասավանդման և ուսումնառության տարբերակված մեթոդներ: | | | | | | |
| 3. 5 Ավարտական աշխատանքի, մագիստրոսական թեզի գրախոսականին ներկայացվող պահանջներում նախատեսված չեն բաղադրիչներ, որոնք ուղղված են ընդհանուր վերջնարդյունքների ստուգմանը, օրինակ՝ ուսանողի՝ ինքնուրույն աշխատելու, տվյալներ մշակելու և եզրակացություններ անելու կարողության գնահատումը, աշխատանքում գործնական առաջարկությունների առկայության գնահատումը և այլն, ինչն էլ ավելի կբարձրացնի գործընթացի արդյունավետութունը և կնպաստի ուսանողի ինքնուրույն հետազոտական կարողությունների զարգացմանը: | 1. Վերանայել ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի գրախոսություններին ներկայացվող պահանջները, մասնավորապես ընդհանուր վերջնարդյունքների ստուգմանը միտված բաղադրիչները:<br>2. Ներդնել ուսանողների ուսումնական բեռնվածության պլանավորման և մշտադիտարկման մեխանիզմներ: | 1. Վերանայել և բարելավել ավարտական աշխատանքների և մասնագիտական թեզերի գրախոսականների գործող ձևաչափը:<br>2. Ամբիոնի նիստերում քննարկել դասախոսների կողմից ներկայացված գրախոսությունների որակը, դրանց համապատասխանությունը առաջադրված պահանջներին:<br>3. Ստուգել ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի վերջնարդյունքները՝ կատարված աշխատանքների ինքնուրույնությունը և եզրակացությունների հավաստիությունը պարզելու նպատակով: | ԳՊՀ ամբիոններում ներդրված են մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների պաշտպանության համար գրախոսման միասնական ձևաչափ: Գրախոսողների կողմից ներկայացվող դիտողություններն ու առաջարկությունները պարբերաբար քննարկվում են ամբիոնի նիստերում և հետևողական աշխատանք են տարվում դրանք շտկելու ուղղությամբ: | ՄԿԾ ղեկավարներ, ֆակուլտետների ուսումնամեթոդական խորհուրդներ | ԳՊՀ ՊԴ կազմ | 2022-2027թթ. | Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի գրախոսման նոր միասնական ձևաչափի մշակում և ներդնում, որտեղ արտացոլված կլինեն կատարված աշխատանքի ինքնուրույնությունը և եզրակացության հավաստիությունը: | Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի գրախոսման գործընթացից ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի բավարարվածության աստիճանի աճ |
| 3. 6. Հստակեցված չէ բենչմարքինգի իրականացման պարբերականությունը, մեթոդաբանոությունը, բուհերի ընտրության չափանիշը, բենչմարքինգի բուն իրականացումը՝ համադրվող բուհի խնդիրների և համադրվող ՄԿԾ-ի | ԳՊՀ ամբիոնների կողմից քննարկել և հստակեցնել բենչմարքինգի իրականացման պարբերականությունը և մեթոդաբանությունը, | 1. ԳՊՀ ամբիոններում քննարկել և հաստատել կրթական ծրագրերի բենչմարքինգի մեթոդաբանությունը, հստակեցնել բուհերի ընտրության | ԳՊՀ-ում գործընկեր բուհերի հետ պարբերաբար իրականացվում են կրթական ծրագրերի բենչմարքինգ, | Ֆակուլտետների դեկանատներ, ֆակուլտետների ուսումնամեթոդական խորհուրդներ | ԳՊՀ ռեսուրսներ 500000 ՀՀ դրամի չափով | 2022-2027թթ. | 1. Բենչմարքինգի իրականացման մշակված և ներդրված մեթոդաբանություն, որտեղ արտացոլված կլինեն ինչպես | Բենչմարքինգի իրականացման գործընթացի արդյունավետության աճ, հրապարակված վերլուծություններ |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| մարտահրավերներն ու հնարավորությունները վերլուծելը: Ներկայացված փաստաթղթերում բացակայում էին բովանդակային վերլուծությունները, ինչը սահմանափակում է համեմատական վերլուծությունների արդյունավետությունը և լավագույն փորձի հնարավոր ներդրումը: | ինչպես նաև բուհերի ընտրության չափանիշները: Ընդլայնել կրթական ծրագրերի բարելավմանն ուղղված գործընթացների շրջանակը՝ միաժամանակ ներդնելով ուսուցման արդյունքների համակարգված գնահատման մեխանիզմներ: | չափանիշներն ու համադրական վերլուծության պարբերականությունը:<br>2. Ֆակուլտետների մեթոդական խորհուրդներում իրականացնել բովանդակային վերլուծություններ՝ գնահատելով կատարված փոփոխությունների ազդեցությունը կրթական վերջնարդյունքների վրա:<br>3. Պարբերաբար քննարկել բենչմարքինգի արդյունավետությունը: | ծրագրերը բովանդակային առումով վերանայվում են, ինչը հնարավորություն է տալիս կրթական ծրագրերը համահունչ դարձնել առաջավոր բուհերի կրթական ծրագրերին: | | | | բենչմարքինգի համար բուհերի ընտրության չափանիշները, այնպես էլ իրականացման պարբերականությունը: | |
| 3. 7. Հարցումների, ամփոփիչ ատեստավորման հաշվետվությունների, դեկանների հաշվետվությունների և կրթական ծրագրերի արդյունավետության գնահատման այլ մեխանիզմների հիման վրա բարելավման փաստեր չկան: | Հստակեցնել ամփոփիչ ատեստավորման գործընթացի որակի ապահովման կառուցակարգերը: | 1, Հիմք ընդունելով ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի և նախագահի կողմից հաշվետվություններում արված դիտողությունները, ինչպես նաև ֆակուլտետների դեկանների հաշվետվություններում ներկայացված բացթողումները՝ մշակել գործողությունների պլան եղած թերությունները շտկելու ուղղությամբ:<br>2, Մշտադիտարկել գործողությունների պլանը, վերլուծել արդյունավետությու | ԳՊՀ ֆակուլտետներում և ամբիոններում գործում է հստակ սահմանված հաշվետվողականության համակարգ, որը ներառում է ինչպես ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահի, այնպես էլ ֆակուլտետների դեկանների և ամբիոնների վարիչների ամենամյա հաշվետվությունները: | Ֆակուլտետների դեկանատներ, ամփոփիչ ատեստավորման հանձնաժողով, ՈԱԲ | Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի աշխատանքների արդյունավետության բարձրացման համար լրացուցիչ ֆինանսական միջոցներ 3.769.500 ՀՀ դրամի չափով, | 2022-2027թթ. | Ամփոփիչ ատեստավորման գործընթացում ՊԻԳԲ շրջափուլի ամբողջական կիրառում: | Ամփոփիչ ատեստավորման գործընթացից շահակիցների բավարարվածության աստիճանի աճ: |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | նը: 3. Հրապարակել գործընթացի վերլուծության արդյունքները: | | | | | | |
| 4. ՌԻՍԿԵՐԸ | | | | | | | | |
| 4. 1.Թեև համալսարանը ուսանողների հավաքագրման համար կիրառում է մի շարք մեխանիզմներ և համալիր միջոցառումներ, այնուամենայնիվ դրանց կիրառումը չի հանգեցրել ընդունելության ցուցանիշների աճի, ինչը պայմանավորված է նաև օբյեկտիվ հանգամանքով: | Ուսանողների հավա-քագրման մեխանիզմ-ների բարելավում և իրականացվող միջոցառումների արդյունավետության բարձրացում: | 1. Ակտիվացնել անմիջական շփումները տարածաշրջանի ուսումնական հաստատությունների հետ թե՛ համալսարանում, թե՛ դպրոցներում, միջին մասնագիտական ուսումնական հաստատություննե րում՝ տարբեր ձևաչափերով: 2. Աջակցել աշակերտներին մասնագիտական կողմնորոշման հարցում, այդ նպատակով օգտագործել համալսարանի ռեսուրսները, լաբորատորիաները, համակարգչային լսարանները, կազմակերպել աշակերտների, ուսուցիչների և ուսանողների հետ անցկացվող ամենամսյա հանդիպումներ՝ անցանց և առցանց ձևաչափերով: 3.Օգտագործելով հնարավոր բոլոր կապուղիները, լիարժեք տեղեկատվություն | Իրականացվում են հանդիպումների, միջոցառումների նոր ձևաչափերի մշակումներ | Դեկանատներ, ամբիոններ, Արտաքին կապերի և լրատվության բաժին | Անհրաժեշտ ֆինանսական միջոցներ՝ 7.500.000 ՀՀ դրամի չափով | 2022-2027թթ. | Ուսումնական հաստատություն ներ այցելությունների հաստատված ժամանակացույց: 2.Ըստ կիսամյակների՝ միջոցառումների հաստատված ծրագրի և ժամանակացույցի առկայություն: 3.Այցելություննե րի, իրականացրած միջոցառումների մասին հաշվետվություն ների և վերլուծություն ների առկայություն: | Դիմորդների թվի աճ: |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | տարածել Համալսարանի ենթակառուցվածքնե րի, ուսուցանվող մասնագիտություննե րի, սոցիալական աջակցության, ակադեմիական շարժունության ծրագրերի, հակակոռուպցիոն միջավայրի, Համալսարանում ուսանելու նպատակահարմարու թյան մասին: 4.Պատշաճ ուշադրություն դարձնել աշակերտների, առաջին կուրսեցիների շրջանում անցկացվող հարցումների վերլուծությունների վրա՝ պարզելու Համալսարանի ընտրության շարժառիթները, և արդյունքները հաշվի առնել հետագա հավաքագրման գործընթացում: | | | | | | |
| 4. 2.Տեսանելի չէ ուսանողների կարիքների վերհանման մի շարք մեխանիզմների, այդ թվում՝ հարցումների, հանդիպումների, քննարկումների կիրառման և արդյունքների վերլուծման պարբերականությունը: | Ուսանողների կարիք ների վերհանման մեխանիզմների կի րառման արդյունավե տության վերլուծու թյան պարբերակա նության ապահովում: | 1.Շարունակաբար բարելավել և բազմազանեցնել ուսանողների կարիքների վերհանման գործընթացները անհատական շփումներից մինչև ֆակուլտետի խորհուրդ: 2.Ուսանողների կրթական | Որակի ապահովման որոշակի գործիքակազմի, մեթոդաբանու թյան առկայություն | ՈԱԲ, ԱՔԲ, դեկանատներ, ամբիոններ, ՈւԽ, ՈՒԳԸ | ԳՊՀ ռեսուրսներ | 2022-2027թթ. | Ուսանողների կարիքների վերհանման մեխանիզմների բազմազանու թյուն և դրանց արդյունավետությ ուն: | Կիսամյակային և տարեկան վերլուծություններ: |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | կարիքների, դասավանդման գործընթացից, դասախոսներից, դեկանատների և ամբիոնների աշխատանքից բավարարվածության վերհանման ուղղությամբ ընդհանուր կիսամյակային պարբերականութ յամբ հարցումների անցկացում: 3.Նշված գործընթացների վերլուծություն և արդյունքների հաշվառումով արդյունավետության բարձրացում: | | | | | | |
| 4. 3.Խնդիրների վերհանման և լուծման առումով ուսանողական կառույցներն էական դերակատարություն չունեն, ինչը, գուցե, ուսանողական կառույցների մասին թերի իրազեկման խնդիր է: Ուսանողական խորհուրդը չի ընկալվում որպես ուսանողների իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կառույց, վերջինի և ուսանողների միջև առկա կապը թույլ է: | Ուսանողական կա-ռույցների՝ Ուսանո-ղական խորհրդի, Ուսանողական գիտական ընկերության դերի բարձրացում, ուսանողների շրջանում ՈՒԽ, ՈՒԳԸ գործունեության մասին իրազեկում, նրանց հետ տարվող աշխատանքների ակտիվացում: | 1.Ակտիվացնել աշխատանքները սովորողների շրջանում ուսանողների իրավունքների և պարտականություննների վերաբերյալ տեղեկատվության տարածման ուղղությամբ, պարբերաբար ծանոթացնել ուսանողներին առնչվող համապատասխան նորմատիվ ակտերին: 2.Խրախուսել ուսանողական խորհրդի /ՈՒԽ/ գործունեությունը, պարբերաբար անցկացնել ֆակուլտետի | Ուսանողական կառույցներնի գործունեության համար անհրաժեշտ իրավական ակտերի առկայություն: | ՈՒԽ, ՈՒԳԸ, դեկանատներ, ամբիոններ | Ուսանողական ինքնակառա վարման մարմինների գործունեության համար անհրաժեշտ ֆինանսական միջոցներ՝ 1.500.000 ՀՀ դրամի չափով: | 2022-2027թթ. | 1.ՈՒԽ և ՈՒԳԸ ակտիվ գործունեություն, նրանց դերի բարձրացում ուսանողների իրավունքների պաշտպանության հարցերում: | 1.Ուսանողական կառույցների ակտիվ գործունեություն, նրանց կողմից բարձրացված և լուծումներ ստացած հարցերի քանակ: |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | խորհրդի և ֆակուլտետային ՈՒԽ-ի համատեղ նիստեր,<br>3.Աջակցել ՈՒԽ-ի աշխատանքային ծրագրերի կազմման ու իրականացման գործընթացներին:<br>4 Ապահովել ՈՒԽ-ին աշխատանքների համար անհրաժեշտ ֆինանսական և նյութատեխնիկական միջոցներով: | | | | | | |
| 4. 4.Թույլ է կապը ամբիոնների և Ուսանողական գիտական ընկերության միջև: ՈւԳԸ հարցերով ամբիոնային պատասխանատուների աշխատանքը համակարգված չէ: Բացակայում են ամբիոնների կողմից հաստատված ՈՒԳԸ գիտական հոդվածների թեմատիկաները: | ՈւԳ ընկերության և ամբիոնների միջև կապի ամրապնդում: | 1.Նպաստել ՈՒԳ ընկերության աշխատանքների ակտիվացմանը և ինքնուրույնության ապահովմանը:<br>2.Անցկացնել ամբիոնների և ՈՒԳ ընկերության համատեղ նիստեր՝ քննարկելու գիտաժողովների կազմակերպման և մասնակցության, դասախոս-ուսանող համատեղ հոդվածներ գրելու, գիտական հետազոտությունների թեմատիկայի հարցերը:<br>3.Համակարգել ամբիոնային պատասխանատունե րի աշխատանքը, ամրապնդել նրանց կապը ուսանողների և ՈՒԳԸ-ի հետ:<br>4.Ամբիոններում քննարկել և հաստատել ուսանողական | ԳՊՀ ՈՒԳԸ-ի կողմից տարեկան հանրապետական գիտաժողովների կազմակերպում: | ՈՒԳԸ, ՈՒԽ, դեկանատներ, ամբիոններ, ամբիոնային պատասխանատուներ, ուսումնական խորհրդատուներ: | ՈւԳԸ աշխատանք ների կազմակերպ ման, գիտաժողովնե րի անցկացման, նյութերի տպագրման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցներ՝ 3.750.000 դրամի չափով: | 2022-2027թթ. | ՈՒԳ ընկերության աշխատանքների ակտիվացում, ինքնուրույնության մակարդակի բարձրացում, գիտա ժողովներին մասնակցության ակտիվացում, ամբիոնների և ուսանողների կապի ամրապնդում | ՈՒԳ ընկերության աշխատանքների, ծրագրերի քանակի աճ, ուսանող-դասախոս համատեղ հոդվածների քանակի աճ, ամբիոններում թեմաների հաստատում և դրանց պարբերաբար վերանայում ու արդիականացում: |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | գիտաժողովների թեմաների ցանկ: | | | | | | |
| 4. 5.Ուսանողները տեղեկացված չեն ազդեցության բարձր գործակից ունեցող պարբերականների, դրանցում տպագրմանը ներկայացվող չափանիշների մասին: | Ուսանողների շրջանում բարձր գործակից ունեցող պարբերականների, դրանցում տպագրվող հոդվածներին ներկայացվող չափանիշների մասին իրազեկման աշխատանքների ակտիվացում, գիտական հետազոտությունների մեթոդաբանության վերաբերյալ վերապատրաստումների անցկացում: | 1.Ուսանողների շրջանում աշխատանքներ տանել բարձր հղման գործակից ունեցող պարբերականների, միջազգայնորեն ընդունված չափանիշների վերաբերյալ իրազեկման ուղղությամբ:<br>2.Կազմակերպել հանդիպումներ և քննարկումներ՝ ուսանողներին բարձր գործակից ունեցող պարբերականներում տպագրվելիք նյութերին ներկայոցվող չափանիշների, հոդվածների կառուցվածքային և բովանդակային պահանջների մասին:<br>3. Պարբերաբար անցկացնել վերապատրաստումներ, խորհրդատվություններ հետազոտական նոր մեթոդների, գիտաչափական այլ պահանջների պարզաբանման ուղղությամբ: | Գիտահետազոտական բնույթի վերապատրաստումների անցկացման բավարար փորձ: | Դեկանատներ, ամբիոններ, դասախոսներ, ՌԻԳԸ, ուսումնական խորհրդատուներ | Վերապատրաստումների համար անհրաժեշտ ֆինանսական միջոցներ՝ յուրաքանչյուր դասաժամի համար 345.000 ՀՀ դրամի չափով: | 2022-2024թթ, | Ուսանողների շրջանում գիտահետազոտության իրականացման իրազեկվածության աստիճանի բարձրացում: | Բարձր գործակից ունեցող պարբերականների, դրանցում տպագրվող հոդվածներին ներկայացվող չափանիշների մասին իրազեկված ուսանողների աճ: |
| 4. 6.Ուսանողների շատ քիչ մասն է իրազեկված կարիերայի կենտրոնի մասին: Ուսանողները աշխատանքի տեղավորման հարցերով հիմնականում դիմում են դասախոսներին և ռեկտորին: Այցի ժամանակ նաև պարզ դարձավ, որ | Ուսանողներին ԳՊՀ շրջանավարտների և կարիերայի կենտրոնի վերաբերյալ իրազեկման աշխատանքների ակտիվացում: | 1.Ուսանողներին, հատկապես ավարտական կուրսերի ուսանողներին տեղեկացնել ԳՊՀ շրջանավարտների և | Կարիերայի կենտրոնի աշխատանքների համար անհրաժեշտ միջոցների առկայություն, | ԱՔԲ, Արտաքին կապերի և լրատվության բաժին, SS բաժին, Համալսարան-գործատու համագործակցության, շրջանավարտների և | Համալսարան-գործատու համագործակցության, շրջանավարտների և կարիերայի | 2022-2027թթ. | Համալսարան-գործատու համագործակցության, շրջանավարտների և կարիերայի կենտրոնի | Համալսարան-գործատու համագործակցության, շրջանավարտների և կարիերայի կենտրոնի միջոցով աշխատանքի |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Կենտրոնը՝ որպես առանձին կառուցվածքային միավոր, առանձնացված չէ։ | | կարիերայի կենտրոնի, նրա գործառույթների և հնարավորություններ ի մասին։<br>2.Համակարգել Կարիերայի կենտրոնի աշխատանքները որպես կառուցվածքային առանձին միավոր։ | ԳՊՀ պաշտոնական կայքէջում առանձնացված ենթաբաժին։ | կարիերայի կենտրոնի աշխատանքները համակարգող | կենտրոնի աշխատանք ների կազմակերպ ման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցներ՝ 5.841.000 ՀՀ դրամի չափով | | համակարգված աշխատանք։ | անցած շրջանավարտների թվի աճ։ |
| 4. 7.Թույլ է ուսանողների նախաձեռնողականությունը, նրանց հետաքրքրությունը կառավարման մարմիններում որոշումների կայացման գործընթացների նկատմամբ։ | Համալսարանում իրականացվող գործընթացներում ուսանողների մասնակցության արդյունավետության բարձրացում։ | 1.Ապահովել ուսանողների մշտական մասնակցությունը ԳՊՀ կառավարման մարմիններում՝ Հոգաբարձուների և ֆակուլտետների խորհուրդներում, գիտական խորհրդում։<br>2.Ստեղծել ուսանողական գործունեության ակտիվացմանը միտված գաղափարների արտահայտման և համակարգման հարթակ ուսանողական կառույցներին կից։<br>3.Ստեղծել գաղափարների բանկ և այն օգտագործել ՈՒԽ և ՈՒԳԸ աշխատանքային ծրագրերում։<br>4.Հնարավորություն տալ յուրաքանչյուր ուսանողի՝ իրականացնելու իր մտահղացումները՝ | Անցկացվում են հանդիպումներ ուսանողների հետ։ | Դեկանատներ, ամբիոններ, ուսումնական խորհրդատուներ, ՈւԽ,ՈՒԳԸ, ՈԱԲ, ԱՔԲ | Լրացուցիչ ֆինանսական միջոցներ հարկավոր չեն։ | 2022-2027թթ. | Ուսանողների ակտիվ մասնակցություն Համալսարանի կառավարման, որոշումների ընդունման գործընթացներին, կազմակերպված միջոցառումների և դրանց մասնակցողների թվի աճ։ | Ուսանողական կառույցների հաշվետվություններ։ |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | ուղղված ներհամալսարանական գործընթացների ակտիվացմանը: | | | | | | |
| 4.8.ԳՊՀ շրջանավարտների հետ հետադարձ կապի ապահովման աշխատանքները համակարգված չեն: Այս խնդրի լուծման հարցում էական դերակատարում կարող է ունենալ ԳՊՀ շրջանավարտների և կարիերայի կենտրոնը: | ԳՊՀ շրջանավարտների հետ հետադարձ կապի ապահովման աշխատանքների համակարգում: | 1.Շարունակել հավաքագրել շրջանավարտների տվյալները՝ համալրելով տվյալների առկա շտեմարանը: 2.Ապահովել դեկանատների և Համալսարան-գործատու համագործակցության, շրջանավարտների և կարիերայի կենտրոնի ակտիվ համագործակցությունը: 3.Ներգրավել ԳՊՀ շրջանավարտներին՝ ուսումնական հաստատություններ այցելելու, տեղեկություններ տարածելու գործընթացներում: | Իրականացվում են համակարգման աշխատանքներ | ՏՏ բաժին, դեկանատներ, Համալսարան-գործատու համագործակցության, շրջանավարտների և կարիերայի կենտրոն: | Անհրաժեշտ ֆինանսական միջոցներ՝ 300.000 ՀՀ դրամի չափով: | 2022-2027թ. | ԳՊՀ շրջանավարտների հետ հետադարձ կապերի ապահովում: | ԳՊՀ շրջանավարտների մասնակցությամբ իրականացված ծրագրերի քանակ: |
| 5. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ | | | | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 5. 1. Բացակայում են հստակ ձևակերպված մեխանիզմները, որոնցով հնարավոր է ստուգել դասավանդողների համապատասխանությունը ՄԿԾ-ում սահմանված պահանջներին: Բացի այդ, միմյանցից տարբերակված չեն բակալավրի ու մագիստրոսի կրթական ծրագրերում դասախոսական կազմին ներկայացվող պահանջները: | 1. Հստակեցնել յուրաքանչյուր ՄԿԾ-ում սահմանված պահանջներին դասախոսների որակավորումների համապատասխանության ստուգման կառուցակարգերը:<br>2. Բակալավրի և մագիստրատուրայի մասնագրերի վերանայում, պրոֆեսորադասախոսական կազմին ներկայացվող պահանջների հստակեցում: | 1. Կատարելագործել դասախոսական կազմի մասնագիտական որակների գնահատման գործընթացը:<br>2. Իրականացնել կրթական ծրագրերում ներգրավված դասախոսների ատեստավորում՝ ՄԿԾ-ում սահմանված պահանջներին համապատասխանությունը ստուգելու նպատակով:<br>3. Բակալավրի և մագիստրատուրայի մասնագրերի վերանայում, պրոֆեսորադասախոսական կազմին ներկայացվող պահանջների տարանջատում: | 1. Միջոցներ ձեռնարկվում են, սակայն բարելավման կարիք կա: | Ուսումնագիտական գծով պրոռեկտոր, Ակադեմիական քաղաքականության բաժին, Մարդկային ռեսուրսների կառավարման բաժին, Որակի ապահովման բաժին | 2.510.0000 ՀՀ դրամի չափով ֆինանսական միջոցներ | 2022-2024թթ. | Բակալավրի և մագիստրատուրայի կրթական աստիճանների բոլոր ՄԿԾ-ներում դասավանդողներին ներկայացվող հստակեցված պահանջներ:<br>ՊԴ կազմի ատեստավորման գործընթացի իրականացում: | Գործող բոլոր մասնագիտությունների վերանայված ՄԿԾ-ներ: Դասախոսների վարկանիշավորման արդյունքների վերլուծություն, դասախոսների վարկանիշի աստիճանական աճ: |
